

ՏԵԱՌՆՐՆԴԱՌԱԶ

Տեառնընդառաջը քառասնօրեայ Յիսուսը տաճար ընծայումի տօնն է : Յովսէփ եւ Մարիամ, Մովսէսի օրէնքի համաձայն, քառասնօրեայ մանուկ Յիսուսին տաճար կը տանին, Աստուծոյ ընծայելու համար: Տեառնընդառաջը կը տօնուի 14 Փետրուարին՝ որպէս անշարժ տօն: Նախորդող երեկոյեան ժամերգութենէն ետք տեղի կ'ունենայ նախատօնակ, կը բաժնուին մուրեր եւ հանդիսադիր եկեղեցականը կը վառէ ատեանի մէջ սեղանին վրայ դրուած մուրերը: Ժամերգութենէն ետք հաւատացեալները կը վառեն իրենց մուրերը ու կը տանին տուն: Եկեղեցական արարողութենէն ետք հին սովորութեան համաձայն եկեղեցոյ բակին մէջ խարոյկ կը վառեն, անոր մոխիրը կը թափեն այգիներուն ու դաշտերուն մէջ, որպէսզի հունձքը սոսառ ու արտերը բերրի ըլլան, իսկ կրակը իր հետ բերէ օդի բարեխառնութիւն եւ ամուսիններու օրհնութիւն: Տեառնընդառաջի հրավառութիւնը կը վերագրուի Տիր Աստուծուն՝ երազներու մեկնաբանը եւ դպրութեան ու արուեստի պաշտպանը:

Հ.Մ.Ը.Մ. Սուրիոյ
Շրջ. Սկաւուտ Խորհուրդ
Թիւ 3/2020

Հրատարակչական
Յանձնախումբ



Ի՞նչ թիւեր գործածելով կրնաս հասնիլ տրուած պատասխանի:

7	-		+	=	8
	-		+	8	= 15
	+	5	-	=	24
	-		+	9	= 32
	+	1	-	=	6
	+	8	-	=	0
35	+		-	=	50
	+	4	-	=	18





ԱԻԱՐԱՅՐԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏ

428-ին հայ Արշակունիներու թագաւորութեան կործանումէն ետք, Պարսկաստանի Յազկերտ Բ. թագաւորը նպատակ ունէր ճնշել իրեն դէմ ծագած հայոց ապստամբութիւնը, գրաւել անոնց ռազմաքաղաքական կեդրոն Արտաշատը, ոչնչացնել ներքին ինքնավարութիւնը եւ իրագործել դաւանափոխութեան ծրագիրը: 449-ին հայ եպիսկոպոսները եւ նախարարները Արտաշատի մէջ ժողով մը գումարեցին եւ այդ ժողովին յայտնեցին իրենց անխախտ հաւատարմութիւնը քրիստոնէական հաւատքին: Անոնք նամակով պատասխանեցին Յազկերտին:

Յազկերտ զայրացաւ հայերու որոշումէն եւ յատկապէս Բագրեւանդ գաւառի Անգղ աւանի մէջ հայոց եկեղեցիները ատրուշաններու վերածելու եւ գրադաշտական կրօնը տարածելու համար Քաջ Վարդան Մամիկոնեան, որ լաւ մարզած ու զինած էր իր բանակը, իրախուսեց զօրքը ու բարձրացուց անոնք նուիրական ոգին, իսկ Ղեւոնդ Երէց իր եռանդուն ճառերով խանդավարեց բանակը:

Հայոց բանակը կը կազմուէր 66 000 զինուորներէ: Աւարայրի ու Վարդան Մամիկոնեանի պատմութիւնը արտացոլած է ճակատամարտին մասնակից Եղիշէ Պատմիչ իր «Վասն Վարդանայ եւ Հայոց Պատերազմին» մէջ:



ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆՂԱՆ

Եկեղեցական իմաստով՝ մեծ պահքին նախորդող Կիրակին կը կոչուի Բուն Բարեկենդան: Այդ օր առատ կերուիտում տեղի կ'ունենայ: Ժողովրդական բարբառներով՝ բարեկենդանք, բարեկենտանք, բերկըն տունք կը նշանակէ բարի ու երջանիկ կեանք: Բարեկենդանը կը խորհրդանշէ ձմրան աւարտը ու զարնան գալուստը, բնութեան զարթօնքը, պտղաւորումը, տնտեսական տարուան սկիզբն ու ժողովրդական երկրագործական տօներէն մէկը: Ան ունէր նախաքրիստոնէական շրջանէն եկած կրօնական բնոյթ, բնութեան իրերու ու երեւոյթներու պաշտամունքը արտայայտող ծեսեր, աւանդութիւններ եւ սովորութիւններ, որ կը կատարուէր հայկական բոլոր գաւառներուն մէջ զանազան ձեւերով Բարեմաղթութիւններ կատարելով կը բաժնուէին իրարմէ Շնորհաւոր Բարեկենդան, բարով հասնինք Սուրբ» Յարութեան»: